The only Advertising Agency for Persia and the Caucasus.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 13

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 20 զրան
Գաւառներում . . . . . 25 զրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 բբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 զրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տօլլար

Ցայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 20 շահի
Հարորդ ,, ,, 10 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՔ 8 ՇԱՀԻ

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal arménien ,,MITK''
= Adresse télégrafique-Tauris ,,MITK'' =

ՄԻՏՔ

ԱՌՕՐԵԱՅ ԵՎ ԱՅԼ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ میطق

Anzeigeblatt fuer Persien

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
Le Gérant
Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPITON
for a year payable in advance.
20 krans=2.00 Dollars

RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
,, ,, ,, ,, ,, 4-th ,, 5 ,,
15% discount for annual subscription paid in advance. Address
The ,,MITK'' Publication Co.
Tabriz, Persia

Published by the ,,MITK'' Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

Բ. ՏԱՐԻ № 13 ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐ 1913 Թ. Tauris, Samedi le 22 Novembre 1913 № 13 Vol. II

Ուզում էք ձեր միայնութեան ժամերին լուռ խօսակից ընկեր ծխեցէք միայն

Եղբարք **ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ** *սեփական գործարանի*

ԵԳԻՊԵՏՍԿԻ, ԻՐԻՍ, ՓԱՐՈՍ, ՊՐԻՄԱ., ԱՐԻՍԼ և ՄԱՐՍ

պապիրոսները:

ԱՋԳ

Պրօխարով Մանուֆակտուրական ընկերութեան Թաւրիզի բաժանմունքը սորանով յայտնում է ի գիտութիւն տեղիս յարգելի հասարակութեան, որ ընկերութեան տեղիս բաժանմունքում ծախւում են կտորով՝ կանխիկ վճարով ամեն տեսակի մանուֆակտուրական ապրանքներ, մատչելի արժէքով։

Գրասենեակը բաց է, բացի ուրբաթ և կիւրակի օրերից, ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկ ժամը 4-ը։

ԽԱՒԱՐԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Մի ամիս առաջ՝ մամուլի էջերում տպուած մի ջատագովական և աւետալից յօդուածից[1]) *մենք այն մխիթարական տպաւորութիւնն ստացանք, որ իբրը գաւառը պատած է դպրոցական ցանցով և հալածուած է արդէն այդ տեղից խաւարի իշխանութիւնը։*

Երջանիկ հայ գիւղեր, մտածում և ուրախանում էինք մենք, գիւղեր, որ կչերմանան շուտով գիտութեան մատակարարած կենսատու լուսով։

Սակայն փաստն ու զառն իրականութիւնը եկան թմունաւորել մեր ուրախութիւնը, զրութեան այլ՝ և մռայլ պատկեր ցուցադրելով մեզ։

Իրազեկ, ընիկ Սալմաստեցի մի թղթակից Սեպտ. 25 թուով ահա թէ ինչ է գրում «Հորիզոնին»։

Նա յայտնում է հրապարակով, որ ներկայ տարում Սալմաստում դպրոցներ բացուած են միայն Հաֆթուանում, Փայջուկում, Մահլամում և Հին-Քաղաքում։

Ասել է 10,000 հայութիւն ունեցող Սալմաստը դպրոցներ ունի միայն 4 գիւղերում, ուր, ըստ թղթակցի, ուսուցիչներ են միայն «սկսնակներ»՝ Թաւրիզի կենտրոնականից, Երևանի թեմականից Ներսիսեան դպրոցից և այլն։

Ապա թղթակիցը մի առ մի թւում է հետևեալ գիւղերը, ուր չկան դպրոցներ։ Դրանք են՝ Ղալասար, Սաւրա, Ախտախանա, Ղզլջա, Դրիշկ, Նէյթանաւ, Խոսրովա, Սարամերիկ, Քէօշամիշ ու Քեալաշան։

Ուրիշ խօսքով Սալմասի 10 կարևոր գիւղերը զուրկ են դպրոցներից։ Դրութիւնը այդպէս պէտք է չլինէր, որովհեան հէնց դպրոցների բացման համար ամառը անձամբ եղել է գաւառում ինքը առաջնորդը՝ շրջելով Սալմաստ—Խոյ-Մակու շրջանները։

Վերոյիշեալ 10 գիւղերում դպրոցներ չլինելը ոչ «պառաական բամբասանքներ» են, ոչ «անձնական կրքի և խծբծանքների արդիւնք», այլ լոկ մերկ փաստեր և այն էլ ի գիր և ի տիպ արձանացուած, զոնէ, որոշ կուրսի մարդոց աչքում «ճշմարտապատում» ու «չխծբծող» համարուած «Հորիզոնի» էջերում։

Եւ միշտ այսպիսի «պառաական բամբասանքներ» անյարիր և անտեղի որակումը ստացած մերկ ու անհերքելի փաստեր են եղել մեր հրատարակածները (օր. Մարտիրոսաբադի դատն ու կորուստը, Քէյվանցոց դատի վատ վախճանը...) դէպի որոնք, ցաւալի է ասել։ մեր պաշտօնական անձինք վերաբերուել են ուսերը վեր քաշելով կամ թոթվելով։

Թող թոթվեն իրենց ուսերը։ Ո՞վ է տուժել ու տուժում դրանից։

Ժողովուրդը ինքը. որի հմր. կան զէտեր և որոնց ոչ-շրջահայեաց գործունէութեան երևսից Սալմասի նման մի հոծ հայութիւն ունեցող և կարևոր մի գաւառամաս՝ այժմ հնձում է խաւարի ճանկերում։

*Ընդունենք Ուրմիի շրջանը, ուր առաջներում եղել են դպրոցներ. գոնէ կային անցեալ տարի Կեարպաբադում և Ռահվայում *)։ Ուրմիոյ շրջանի հայերի թիւը հասնում է 8000-ի։*

Այդ 8000 հայութիւն ունեցող Ուրմիոյ հայ գիւղերը, այս տարի, գոնէ նմուշի և զեղհատի համար չունին մի հատիկ դպրոց անգամ, ի բաց առեալ քաղաքինը։

Մեր վիճակներում Ուրմիոյ շրջանը բաւական կարևոր տեղ է բռնում։ Զանազան միսսիոնարութիւնների համալսարանական ներկայացուցիչներ ամենայն նախանձախնդրութեամբ «հերետիկոս» հայի «մոլորուած» հոգին ձեռք է ձեռք են խլում։ Չկան այդ շրջանում, ինչպէս ասացինք. հայ դպրոցներ, ոչ մի կանոնաւոր՝ քահանայ, որ հսկակշռել կարողանան այդ սպառնացող ոյժերին։ Այդ շրջանում ինչ-ինչ պաշտպանութիւնների անուան ներքոյ, Քրիստոսի աւետարանը միայն հեթանոսներին քարոզելու միսսիա ունեցողները վաճառք են հանում կամ դնում են հայի խիղճն ու դատանները։ Եւ եթէ կար մի գաւառամաս, որ ամենից աւելի էր կարօտում առաջնորդի այցելութեան, դա հենց Ուրմին էր, որին բնաւ պէտք չեն գանազան Պ.ևոնդ Աբեղեաներ կամ Լազարեան վարդապետներ, որ կանչւում են այդ յոյժ կարևոր շրջանի համար։

Բայց մենք շարունակում ենք մեր խօսք էլի դպրոցների մասին։

Սոյն համարի թղթակցութիւնից պարզ կլինի ընթերցողներին, որ դպրոց չկայ և 210 տուն ունեցող Մարաղում ուր վերջին 30 տարուայ ընթացքում պահել են ուսուցիչներ ու դպրոց։ Չկայ դպրոց Արդաբիլում։ Հապա երկու դպրոց լինի 8000 հայութիւն ունեցող Ղարադաղում։

Մակուի Գանքի գիւղ (40 տուն), Քիշմիշ թափա [60 տուն] աւաններում չկան դպրոցներ, ինչպէս և չկայ դպրոց բուն Մակու քաղաքում. ուր 52 տուն հայեր կան։

Սա մի ահռելի և սարսռեցնող դժբաղդութիւն է։ Գաւառը մոռացուած, գաւառը խնտեսուած, գաւառը ի կամս Աստուծոյ և իր բաղդին թողնուած։ Այսպիսի անմխիթար և ճնշուած կացութիւն ոչ մի ժամանակ չի տեսել մեր թեմը. գոնէ վերջին երկու տասնեակ տարիներում։

Ո՞վ պէտք է հոգար այս ամենի մասին։ Ո՞վ պիտի օգնութեան հասնէք և գուրգուրար գաւառը, որին յիշում են առաւելապէս երբ պտղի է պէտք լինում։

—Այդ պարարը, գոնէ առաջներում կատարել է առաջնորդարանը, որ աչակից չունէր ոչ թեմական խորհուրդ, ոչ թեմական ժողով, ոչ ներկայի գիւանն ու գործավար և այլն։

Իսկ ժողովրդական ներկայացուցչութեան այս երջանիկ օրերում, փոխանակ առաջդիմութեան, տիրում է ընդհակառակը յետադիմութիւն, խաւար, տգիտութիւն և ուսման հալածանք։

Մեզ համար այլ ևս անհասկանալի է, թէ գաւառի այսպէս խաւար մնացած ժամանակ, էլ ինչ խղճով մարդիկ այստեղ շարունակում են իրենց՝ ժողովրդի «պատգամաւոր» կամ «ներկայացուցիչ» հռչակել։

Ինչ արին այդ ներկայացուցիչները, գոնէ, իրենց ընտրողների ուսումնական վիճակը բարելաւելու համար։

Ե՞րբ այդ պատգամաւորները վերջապէս ժողով կպահանջեն, հաշիւ ու գեկուցում կուզեն թեմական գործերի, ծախսերի, և դժբախտ ու խաւար մնացած ժողովրդի մասին։

Պատգամաւորութիւնը հօ մի զարդ չէ. որ մարդիկ պարծենան դրանով։ Գործ, ցաւ և հոգս է կապուած պատգամաւորութեան կոչման հետ։

Իսկ ո՞ր մէկը պատգամաւորներից արդարացրեց որ ինքը ցաւակից է իւր ընտրող ժողովրդին, դիւրազգաց է դէպի նրա շահերի վտանգումը, կամ տանջւում է նրա հոգսերով։ Փաստը ցոյց տուեց, որ մարդիկ աւելի բարեկամ են անհատի և առաւել նրա կողմը-

[1]) *Տե՛ս «Մշակ» № 213, յօդուած Հայ-կազմնու։*

*) *Այդ տեղն դպրոցը մի քանի տարիներից ի վեր պահւում էր պ. Ա. Միրզաջանեանի Ջանքերի շնորհիւ։*

նակիցը, քան ժողովրդի և նրա շահերի կողմնակիցը։

Պատգամաւորական ժողովը իր դերում չէ։ Կամ պէտք է լուծուի անիմաստ դառած այդ ժողովը և կամ պէտք է արդարացնէ լուրջ գործնէութեամբ իր գոյութեան հիմունքները։

Գաւառը մոռացուած է, գաւառը գնում է ձեռքից, դաւանափոխութիւնը օր աւուր սպառնում է մեր դժբաղդ ժողովրդին, իսկ մենք շոյում ենք մեզ, որ այստեղ կենտրոնում նստած «գործ» ենք կատարում։

Օտարներն ու խաւարը կլանում են այժմ՝ Զինգիզ խան ու Լէնկթէմուրներին զիմացած մեր հային։ Ո՞վ է տէր կարդուած և ո՞վ պարտ ունի փրկելու մեր ժողովրդին խաւարից, կորուստից, դաւանափոխութիւնից և անդպրոց մնալուց

Հայ դպրոցի ու հայ գրի 1500-ամեակ և 40,000 հայութիւնը, գրեթէ, անդպրոց Ատրպատականում. ինչ զուգադիպութիւն։

Կարող է պատահել, որ այս հսկայ պահանջի զիմաց իրեն անզօր զգայ մեր առաջնորդը իր կիսակամ թեմական խորհրդով, բայց ինչ պէտք է անէ նա այդ դէպքում։

—Նա, այժմ ևս ուշ չէ, պէտք է կանչէ պատգամաւորներին և ասէ նրանց.

—Պարոնայք, պատգամաւորներ, ահա դուք և ձեր թեմն ու ժողովուրդը, ես պոռել եմ թեմի որոշ մասերը, այս քանը էր եղել հնարաւոր, որ արել եմ, իսկ թեմի ընդարձակ տարածութեան վրայ, իբրև ովազիսներ, հազիւ հազ երևում են մի քանի դպրոցներ։ Այդ քանը բաւարար չէ. ահա թեմի դրութիւնը, դուք էլ թեմի ներկայացուցիչները, ասէք, կամ եկէք անենք ինչ բարին է և օգտակարը։

Սա միակ խելացի, բանաւոր և ուղիղ ճանապարհն է ցանկալի արդիւնքի հասնելու համար։ Մինչև առաջնորդը ի թիկունս չկանչէ ժողովրդի ներկայացուցիչներին, որքան և բարի ցանկութիւններ էլ ունենայ, նա ցանկալի նպատակի չի հասնի։ Եւ չգիտենք ինչ կայ, որ նա այդքան խուսափում է թեմական ժողովի գումարումներից և նրա գործակցութիւնը ուզելուց։

Ողբերի պատմութիւնը—այդ մեծ ու անսխալ ուսուցիչը—այնտեղ է ապացուցելու, որ բոլոր այն երկրներում, ուր արհամարհուած է ժողովրդական ներկայացուցչութիւնը և գործում է միայն անպատասխանատուութիւնը, այնտեղ կործանումն ու այլասերումը անխուսափելի են և ժողովրդի ու գործերի դրութիւնն այն խաւարն ու ապջամուղջը, որ տիրում է այժմ մեզնում և որը մենք չտեսնել ենք ձեացնում։

Թեմական խորհրդի լրիւ կազմ, թեմական ժողովի ի կեանս կոչումը, ահա ինչը կփրկէ մեզ կորստից, ահա թէ ինչը կցրէ խաւարի իշխանութիւնը և կդնի մեր ժողովրդին կրթութեան փրկարար շաւղի վրայ։

Ո՞վ է այն գիտակիցը և ազնիւ մարդը, որ արձագանք է տայու մեր այս կոչերին։ Ժողովուրդը մեզ է սպասում։ Գաւառը Թաւրիզից է սպասում իր փրկութիւնը, իր բարձրացումն ու լուսաւորումը։

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ատրպատականի պատուարժան Թեմական խորհրդին.

Մեծարգո՛յ Տեառք.

Դէպի մեր գաւառական ժողովուրդը և դէպի մեր անշքացած եկեղեցին տացած սրտացաւ վերաբերմունքը թելադրում են ինձ հետևեալ առաջարկն անել ձեզ և սպասել անմիջական իրագործում։

Խմբագրականով ես գրել եմ թէ գաւառը ինչ վիճակում է, մանաւանդ Ուրմին, ուր յաջորդի պաշտօնով պիտի գնայ արդէն Թաւրիզ ժամանած Լալազարեան վարդապետը։

Կատարուած է ամենանպաստաւոր մի ընտրութիւն։ Սիրում ենք հաւատալ, որ այդ ընտրութեան մէջ մատ չունի մեր առաջնորդը, որ սրտացաւօրէն էջմիածնից մի շատ աւելի կարող վարդապետ ուղարկելի Ուրմու խառնակ վիճակի համար։

Լալազարեան վարդապետը բնաւ չի համապատասխանում Ուրմիոյ շրջանում յաջողութիւն վարելու խիստ պատասխանատու, լուրջ ու ծանր պաշտօնին, ոչ իր անձնական հանգամանքով, ոչ իր պատրաստութեամբ և ոչ իր անցեալ գործնէութեամբ։

Լալազարեանը մի Տաճկահայ գաւառացի է, խիստ սահմանափակ կրթութեամբ անգամ չունի գոնէ մի Երևանի թեմ. դպրոցի սանի կրթութիւնը։ Թէև վարժ է ժամերգութեան և օրացոյց կազմելու մէջ, այնուամենայնիւ այդքանը գրաւական չեն, որ երբեմն՝ մի մոռացուած Աբարանի Մոզնու վանքի... վանահայր կարողէ օգտակար և պատուաբեր լինել մեզ Ուրմիում. ուր տակտ, հմտութիւն, Եւրոպական կրթութիւն է պէտք՝ գլուխ և ժողովուրդ պատրաստելու միջազգային այդ սոսկալի մրցարանում։ Մենք նրա անձի դէմ ոչինչ չունինք, միայն պարզ է մեզ համար այն անհ[illegible] որ դրութիւնը, որի մէջ կընկնի նա, օրինակ, հէնց մի խորամանկ սպիտարատի հետ չափուելիս։ Պէտք չէ նորան անյարմար դրութեան մէջ քցել, իր ոյժերին անհամապատասխան և անյարմար տեղ դրկելով։ Այլ տեղում և այլ պաշտօնում, գուցէ, նա օգտակար լինի։

Ուրմիում երկար տարիներց ի վեր գործում են Ամերիկեան և Անգլիական համալսարանական, հմուտ աստուածաբան, պատմաբան, մի խօսքով՝ զիտական միսիոնարներ, այլ և կան հզօրագրեցիկ և բարձր դիրքի տէր ռուս հոգևորականներ, կաթոլիկ և կրթուած միսիոնարներ և այլն որոնց յետև կանգնած են իրենց հզօր հիւպատոսները։

Օտար զիտնականների այդպիսի դրժուարատար շրջանում ի՞նչ կարող է անել օտար լեզու չիմացող մի խեղճ ու կրակ կրթութեամբ հին կուրսի հայ վարդապետ, որի ժողովրդին սպառնում է ճարակող դաւանափոխութիւնը։ Առնուազը պէտք է գիտենալ Եւրոպական մի լեզու, գոնէ անպայման ռուսերէն։ Չէ՞ որ այնտեղի յաջորդը միշտ գործ ու շփումն է ունենալու մանաւանդ ռուս հիւպատոսի, արխիմանդրիտի, օֆիցերների հետ։ Ինչո՞ւ օտարների առաջ մենք կուչեկած մնանք։ Մի՞թէ չկար Էջմիածնում աւելի պատրաստուած, առաւել պատշաճ և պատկառանք ազդող մէկը, որ ուղարկուէր։ Եւ զարմանալի է որ Էջմիածինը այդէս թեթեակի՞ է նայում մեր այդ գաւառի վրայ։

Առ հասարակ յաջորդութեանց մասին մեր մէջ մի շատ թիւր կարծիք կայ։ Ուրմին մանաւանդ խիստ կարևոր կենդրոն է։ Ուրմի ուղարկուողը պէտք է թեմի առաջնորդին զուգահաւասար, պատրաստուած, պաշարի, կենդանի հոգոյ տէր եւ ոգեշունչ քարոզներ խօսող մէկը լինի։ Վերջապէս պէտք է լինի այնպիսի մէկը, որ օտար եկեղեցիների միսիոնարների առաջ հպարտութեամբ ցուցնենք նորան և նա նոցա մէջ լարգանք ու համակրանք ստեղծի դէպի իր անձը, դէպի իր եկեղեցին, իր կրթութեամբ և բարքով։ Այս պահանջներից ամենամինիմին չի համապատասխանում Լալազարեան վարդապետը։

Ես առաջարկում եմ դարմանել այս սխալը յետ դարձնելով Լալազարեան վարդապետին և կանչելով գոնէ Արծակ վարդապետին։ Նա ճեմարանական է, դրականութեամբ զարգացած, լսել է ռուսական համալսարանում և պատրաստուած մէկն է։ Այդպիսի մէկը գոնէ ոչ ինքը կճնշուի օտարների առաջ և ոչ մեզ ու մեր ժողովրդին կճնշի։ Ես այս առաջարկի վրայ պնդում եմ իբրև պատգամաւորական ժողովի անդամ, իբրև հայ մարդ, իբրև խմբագիր, որ ուզում է իր ժողովրդին բարձր ու բարձրացնող մի հոգևորական տեսնելև եկեղեցին՝ անամօթահար։

Եւ Ուրմի գնացողը պէտք է երկարտարիներով մնայ և դարմանէ շատ հին ցաւերը։

Ա. Տ. Վ.

ԱԿՆԱՐԿՆԵՐ «ՄԻՏՔ»-Ի ԴԻՏՈՂԱՆԻՑ

ՄԵՐ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ *)

Թող պարծենալ չըլինի ու չհամարուի այստեղ անցողակի լիշել, որ «Միտք»ի խմբագրութիւնը արդէն սկսել է առնել նաև այդ կարևոր բայց ցարդ զանցառեալ գործն էլ կատարելու քայլը։ Եւ մենք այցելել ենք անցեալ շաբաթուայ ընթացքում մի քանի հարկ եղած տեղեր, որպէսզի նախ մեր «Ակնարկ»ների համար հաստատ և իրական փաստեր ճարենք և այնուհետև զգնութեան, օժանդակութեան ձեռք կարկառենք մեր հասարակութեան չքաւոր, բազմատանջ և բազմակարօտ դասակարգին։ Եթէ հնարաւոր լինի մեզ զարթեցնել հասարակական քընած—թմրած խիղճն ու գիտակցութիւնը, սրել նրա տեսողութիւնը, բոցավառել նորա բարեսիրական զգացումները, որպէսզի նա կատարէ իր ընկերական, համայնական իր մարդկային պարտականութիւնը դէպի իր եղբայրը, ընկերն ու դէպի հարևանը, այս անգամ դէպի իր թշնամին՝ ապա մենք մեզ բաւարարուած կզգանք։ Եւ մենք չենք հաւատում որ իր 1500 ամեայ գրով ու գրականութեամբ, իր կուլտուրական զարդացմամբ և առաջաւորագոյն կողմից Եւրոպացոց կողմից Եւրև կուլտուրական մի ազգ և կարողանում ենք իւրացնել Եւրոպական մաքի արգասիքները, խոստովանե՛նք վճռականօրէն, որ այդ բոլորը մենք պարտական ենք հայ տառին, որ սկսած Ե-դարից մեզ դարձրեց գիտնականները մտաւոր գործնէութեան, շնորհիւ մայրենի դպրութեան, որ դրեց մեզ քաղաքակրթութեան շաւղի մէջ, որ փրկեց մեզ վրանաբնակներին և թափառականներին յաւիտեան անմիտ, անպատակ, անիդէալ և անգիտակցական կեանքից, և, որ գլխաւորն է, խլեց մեզ ձուլման վտանգից։

Հայ տառը, դա ինքը հայ ոգին է, հայ ազգը, որի վերածնողները եղան Սահակ ու Մեսրոպ։ Թող նրանց լուսաշող հոգիները ընդ երկար ճախրեն մեր գլխի վերը ելքման ու արևաբերի օրերին ջերմացնեն մեր սրտերը և, որպէս հրեղէն սիւնը անապատում, առաջնորդեն մեզ նոր—խոստացեալ երկիրը մեր կեանքի դժուարին ճամպու մէջ, յաւէտ անշէջ պահելով մեր սրտում հայ լուսոյ լամբարը—հայ գիրը մայրենի լեզուի բուն ոգին։

Ա. Տ. Վ.

(Վերջ)

*) տե՛ս «Միտք» №-12

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑ ՏԱՌԻԵՐԻ ԳԻՒՏԸ *)

Հինգերորդ և յետագայ դարերում մեր ու մեր հայրենիքի գլխով այնպիսի ահռելի փոթորիկներ են շաչել անցել, որոնք չեն դիմացել շատ ու շատ ժողովուրդներ։ Իսկ եթէ մենք, որպէս հաստատուն կաղնի, դիմացել ենք այդ բոլորին, ապա շնորհիւ հայ տառի, որ ծաղկեցրել է մայրենի լեզու, գրականութիւն, ոգի, ազգային արժանապատուութեան գիտակցութիւն, ազգային եկեղեցի, որոնց մէջ կրթուել ամրակառոյց մի պարիսպի մէջ, պահպանուած՝ յետ ենք մղել ամեն մի յարձակում, որ հնարաւոր է ուներ հային կլանել, ընկլուզանել և անցեալացնել։

Եթէ դուք պարծանքով յիշում էք պատերազմները Վարդանաց ու Վահանանց, ապա լաւ գիտցէ՛ք, որ Աւարայրի դաշտում Տղմուտի երկարութեամբ արձանացած այդ քաջերը Սահակ-Մեսրոպեան դպրոցի սաներն էին, սնած ու նոր ծնած հայ տառով, հայ հոգով, քաջիր, որը ազգ ու եկեղեցի փրկեցին մարդախոշոր բեռնաւոր ցաղկերպի կատաղի հալածանքից։

Եթէ այնուամենայնիւ էլի Սասանեանների և Բիւզանդացոց յաստ ու անվերջ հալածանքների դէմ կարողացանք մեր գոյութիւնը պահպանել, ապա այդ պարտական ենք հայ տառին, որի շնորհիւ ստացած կրթութիւնը մեզ ներշնչել էր այն գիտակցութիւնը, որ մենք ուրոյն մի ազգ ենք մեր կուլտուրայով,, և որպէս ա՛յդպիսին՝ պէտք է ապրենք ու մեռնենք։

Եթէ արաբների, Սելջուկեանների, Զինգիզխանների ու Լէնկթէմուրների աշխարհաւեր արշաւանքներից, որոնք փոթորկէն դալիս անցնում էին մեր դժբաղդ հայրենիքի վրայով, մենք ազատ ու վերջնական կործանումից զերծ մնացինք, ապա այդ մենք պարտական ենք հայ տառին, հայ գրին և հայ լեզուին։ Լեռներում ու փաստարներում, այս ու այն անմատչելի վանքերում կծկուած սուրբ վանականները ամուր սեղմած իրենց կրծքին Մեսրոպի գիրը՝ փոթորիկների անցնելուց յետոյ, յուշիկ ու զգոյշ դուրս էին գալիս ժողովուրդի մէջ, հայ գիր ու հայ դպրութիւն էին ուսուցանում զարդանդած հայութեան։ Եւ այսպէս՝ ընդհանուր աւերածութեանց ու արան հեղեղների միջից ծաղկում էր նորէն մի երիտասարդ հայութիւն, զօտեպնդուած ու զրահաւորուած հայ տառով։

Եթէ Նահապետեան աւերիչ արշաւանքներից մինչև այսօր մենք դիմացել ենք քրիստոնէութեան մահաբեր թշնամիների և քրիստոնէութեան անունով գզուելի մարդասութեամբ գրաղուողների պէս-պէս ու զանազան դաւ-հալածանքներին, թէև վերածուել ենք բեկորների և, դժբաղդաբար, զանազան յարանուանութեանց՝ և այնուամենայնիւ աշխարհիս երեսին մնացել ենք իբրև մի ազգութիւն մեր մայրենի եկեղեցով, ապա այդ պարտական ենք հայ տառին, որ կորստից փրկելով հայ լեզուն, ուսուցել է մեզ, որ մենք անկախ ուրոյն մի ազգ ենք, մեր առանձին կուլտուրայով, ստեղծագործութեամբ, հոգեբանութեամբ և պարտք ունինք այդ բոլորը պատուով ու անաղարտ պահելու, որպէս արքայական աւանդ՝ ստացուած նախնիքներից։

Վերջ բանից, եթէ այսօր մենք մեր գրականութեամբ, գեղարուեստով, ճարտարապետութեամբ հաշուի ենք առնում Եւրոպացոց կողմից իբրև կուլտուրական մի ազգ և կարողանում ենք իւրացնել Եւրոպական մաքի արգասիքները, խոստովանե՛նք վճռականօրէն, որ այդ բոլորը մենք պարտական ենք հայ տառին, որ սկսած Ե-դարից մեզ դարձրեց գիտնականները մտաւոր գործնէութեան, շնորհիւ մայրենի դպրութեան, որ դրեց մեզ քաղաքակրթութեան շաւղի մէջ, որ փրկեց մեզ վրանաբնակներին և թափառականներին յաւիտեան անմիտ, անպատակ, անիդէալ և անգիտակցական կեանքից, և, որ գլխաւորն է, խլեց մեզ ձուլման վտանգից։

Հայ տառը, դա ինքը հայ ոգին է, հայ ազգը, որի վերածնողները եղան Սահակ ու Մեսրոպ։ Թող նրանց լուսաշող հոգիները ընդ երկար ճախրեն մեր գլխի վերը ելքման ու արևաբերի օրերին ջերմացնեն մեր սրտերը և, որպէս հրեղէն սիւնը անապատում, առաջնորդեն մեզ նոր—խոստացեալ երկիրը մեր կեանքի դժուարին ճամպու մէջ, յաւէտ անշէջ պահելով մեր սրտում հայ լուսոյ լամբարը—հայ գիրը մայրենի լեզուի բուն ոգին։

Ա. Տ. Վ

(Վերջ)

*) Սկիզբը տե՛ս «Միտք» № 10, 11 և 12

դիմութեամբ պարծեցող ու ներկայումս էլ իր կրկնակի Յորելեաններով աշխարհ թնդացնող մեր Հայ ազգի ու ցեղի այսօրեղ բնակուող պատկառելի մի բեկորը կարող է և ընդունակ՝ անտարբեր մնալ և՛ դէպի մեր կոչերը, երբ մենք հնչեցնում ենք ահազանգը՝ որպէս հաւատարիմ դէտը հասարակութեան։ Ահա մենք այդ անում ենք այսօր մեր ամբողջ հասարակութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրելով մեր ազգատ դասակարգի վրայ, որ կանգնած է խեղճ ու կրակ վիճակում, բոլորովին անպատրաստ ձմեռային ահռելի և երկարատև եղանակի բոլոր երևոյթների ու անտանելի նեղութիւնների, սոսկումների, տանջանքների անվերջ—անվախճան շարքերի առաջ։ Եւ որպէս զի հնարաւոր լինի մեզ մի կերպ օգնել, սփոփել, ամոքել ու թեթևացնել նրանց տրխուր դրութիւնը, թող բոլորենք մեր Ազգատախնամի շուրջը, որպէս միակ միջոցը նրանց օգնութեան հասնելու և թող մեր Առաջնորդ Հայրը իսկոյն և եթ մի յանձնախումբ անուանէ տունէ տուն և խանութէ խանութ մանգալով նպաստներ հանգանակելու մեր խղճուկներից ամենակարոտներին օգնելու համար։ «Ուր բարի կամեցողութիւն կայ, այնտեղ կայ նաև միջոց» և դուք պիտի տեսնէք որ մեր 5 հազարանոց պատկառելի համայնքից մի քանի օրուայ ընթացքում, շատ չասենք՝ 10,000 դրանի մի սիրուն գումար պիտի յանձուի Ազգատախնամին, (պայմանաւ սակայն որ տոկոսաբեր թղթերը չը գնի այդ փողով, այլ իսկոյն և եթ յանձնուի իր իսկական նպատակին։ Թող տիկնայք փափկասուններն էլ մի անգամ ևս յիշելով իրանց նախկին պանծալի գործունէութիւնը, դուրս գան դուրս իրանց մեռելային դրութիւնից դէպի ազնիւ ջանքի և աշխատութեան ասպարէզը և ձեռնարկեն կազմակերպելու նորից նախկին այնքան փառաւոր և եռանդուն Հայուհեաց Բարեգործականը։ Անցած է այժմ արդէն կուսակցական սոսկումներով լի և աղէտալի դարը, որ այնքան թանգ նստեց մեր ջանիկ՝ խորտակելով ու ամայութեան դատապարտելով մեր ամբողջ հասարակական կեանքը և իսկոյն և եթ թող սկսեն ոգի ի բռին գործել, վասն զի անելիք շատ բան կայ ամենքիս համար, անգամ մեր օրիորդներին, պատանիներին և դեռատի մանկութեան, և բոլորիս միակ ջանքը և նպատակը պիտի լինի զօրացնել ուժեղացնել կատարելագործող մի մարմին դարձնել մեր Ազգատախնամը այն աստիճանի, որ յարգելի վարչութիւնը «Մեղ»ի յաջորդ էջերում այսպիսի մի ազդ հրատարակէ «Յայտնում ենք յարգելի հասարակութեան, որ այժմ շնորհիւ ժողովրդեան աջակցութեան Ազգատախնամի սնդուկը ի վիճակի է բոլոր վկայուած իսկական չքաւորներին անխտիր նպաստ տալու ըստ իրանց կարողութեան. դիմեցէք մեզ ով դժբաղդներ և թշուառներ ամենայն համարձակութեամբ»։

(Կնիք վարչութեան)։

Իսկապէս եթէ մենք գիտենանք միայն ճշմարիտ համոզումով թէ որպիսի հզօր ոյժ է թաղնուած մի Քրիստոնեայ համայնքում և սկսենք կիր արկանել այդ մեծ ոյժը՝ գործածելով իմարկէ բոլոր հնարաւոր և անկարելի համարուած միջոցները մենք պիտի տեսնենք որ յիրաւի հասարակական բարեսրտութիւնը հրաշքներ է գործում և մենք կունենանք այստեղ Թաւրիզում ժամանակի ընթացքում, հարկաւ, մի գեղեցիկ օր Ազգատախնամի Վարչութեան տակ մի համեստ Որբանոց, ուր գոնէ տասնեակ անտէր-անտէրունչ հայ երեխայք ապատան կը գտնեն։ Կուենանք նաև մի փոքրիկ անկելանոց, ուր մեր ծերացած հիւանդ մահամերձ եղբայրները և քոյրերը իրենց աչքերը կը փակեն գոնէ օրհնելով ազգին, որ ամոքել է իրանց թշուառութիւնը։ Եւ դեռ շատ բաներ կան, որոնց կարօտ է մեր հասարակութիւնը այսօր և ապագային, բայց առաջ ամենաէականը և ամենակարևորն է չքաւոր դասակարգին օգնելու խնդիրը, օգնենք, օժանդակենք, ուրեմն, մեր Ազգատախնամին. որպէսզի նա էլ սրտով գործի կպչի և կատարէ այն, ինչ որ մենք սպասում ենք նրանից։

Միհրան Պաղդասարեան։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ.

—

Տեղեկագիր Ընկերութեան 1912 թուի գործունէութեան.

Շուրջ երկու տասնեակ տարի է, որ հնագէտ պ. Երուանդ Լալայեանի հիմնադրութեամբ գոյութիւն ունի վերոյիշեալ ընկերութիւնը, որի պաշտօնական օրգանն է հիմնադրի խմբագրութեամբ հրատարակուող «Ազգագրական եռամսեայ պատկերազարդ հանդէսը»։

Ընկերութիւնը իւր գոյութեան ընթացքում աչքի ընկնող զնահատելի աշխատանք է կատարել ազգագրական և հնագիտական ասպարիզում։ Այդ աշխատանքների բազմապիսի արդիւնքները, ընդարձակ և լայն ուսումնասիրութիւնները տպագրուած են «Ազգագրական Հանդիսի» զանազան համարներում։

Ազգագրական ընկերութիւնը հաւաքել է բազմաթիւ հնագիտական էրեր, որոնք տեղաւորուած են ընկերութեան այժմեան թանգարան — գրադարանում, հրատարակել է քսան և չորս գիրք իւր «Հանդիսից»։ Հիմքէ դրելև գրէթէ անդադար հարստացրել է Կովկասագիտական Մարդաբանական գրադարանը։ Կազմակերպել ու կատարել է բազմաթիւ գիտական արշաւանքներ գրեթէ Կովկասի բոլոր գաւառներում։

Անցեալ 1912 թուականին ընկերութեան խորհուրդը զգալով թանգարան — գրադարանի համար սեպհական շէնք ունենալու անհրաժեշտութիւնը, Վեհափառ կաթուղիկոսից անցեալ յունիս 22-ին, թոյլտուութիւն է ստացել կառուցանելու թանգարան—գրադարանի շէնքը Թիֆլիզի Վանաց եկեղեցւոյ արևմտեան կողմում զբաղուած էջմիածնապատկան հողի վրայ, այն պայմանով, որ ընկերութեան փակման կամ խափանման ժամանակ շէնքը ընկերութեան այլ շարժական կամ անշարժ կալքերի հետ մնայ սուրբ էջմիածնին։

Յիշեալ անցած տարեշրջանում պ. բժ. Զարգարեանի նախաձեռնութեամբ կազմուել է մի առանձին մասնաժողով յատկապէս Գողթան գաւառի ազգագրական և հնագիտական գրերը հաւաքելու և յանձնելու ընկերութեան թանգարանին ի սեպհականութիւն՝ այն պայմանով, որ այդ բոլորը թանգարանում մի առանձին բաժանմունք կազմեն Գողթան մակագրութեամբ։

Տարուայ ընթացքում արձանագրած Միքայելեանին յիշեալ բաժանմունքի համար պատուիրուած են 4 մանիկէններ։ Սրանցից մէկը գոկ կնոջ մանիկէն է։ Զանազան անձնաւորութիւններից մանիկէնների համար ստացուած են նուէրներ. գոկ կնոջ բոլոր հանդերձները և մի պահարան. Վարդաշէնցի Ուսի կնոջ բոլոր շորերն ու զարդերը, հայ օրիորդի և Ախալցխայի հայ կնոջ հանդերձներն ու զարդերը։ Ընկերութիւնը ստացել է նաև զանազան բազմաթիւ նուէրներ հագուստներ, հին դրամներ, քարացած տերևներ ու կեղև, հին զէնք ու զրահներ, արձաններ, դրամ՝ հնագիտական իրեր գնելու համար, իւղանկար ու վիմատիպ պատկերներ, հին արծաթէ և այլ մետաղներից շինուած ամանեղէններ, զանազան հին գործիքներ և այլն։

Կովկասագիտական Մարդաբանական գրադարանը կամաւոր գրադարանապետութեամբ Տ. Հ. Լալայեանի. յիշեալ տարեշրջանում գետեղուած է եղել Լերմոնտովեան փողոցում էջմիածնապատկան տանը № 1։ Տարուայ վերջը գրադարանը ունեցել է 5946 կտոր գիրք, որոնցից 3659 կտորը ստացուած են միայն 1912 տարեշրջանում։

Նոյն տարեշրջանում ընկերութեան խորհուրդը ի յիշատակ հայկական տառերի 1500 ամեակի և տպագրութեան 400 ամեակի որոշել է կազմակերպել Թիֆլիզում հայկական հրատարակութիւնների ցուցահանդէս հրատարակելով հայ մամուլի պատմութիւնն ու նրա բովանդակութեան մանրամասն ցուցակը, աշխատելով կամ դրամով և կամ իրրև նուէր ձեռք բերել այդ բոլոր հրատարակութիւնները իւր դրադարանի համար և այսպիսով դարձնել այն մի մնայուն յուշարձան հայ գրերի գիւտի և հայկական տպագրութեան։

Ըստ որոշման արդէն բացուել է Ռուսահայ պարբերական մամուլի բաժինը, որի առթիւ կազմուած է և տպագրուում է ամբողջ ռուսահայ մամուլի գրախօսութիւնը։ Ցուցադրուած է ռուսահայ բոլոր խմբագիրների խմբանկարը։ Տեղի են ունեցել դասախօսութիւններ։ Պ. Լալայեան խօսել է հայ գրերի եւ տպագրութեան կապուած դերի մասին հայերիս մէջ, իսկ պ. Մ. Մատէոսեան հայ պարբերական մամուլի մասին։ Հետզհետէ կբացուին միւս բաժինները և սրանց հետ տեղի կունենան դասախօսութիւններ և առանձնապէս կոպուին գրախօսականներ ու պատմական տեսութիւններ։

Նոյն տարուայ ընթացքում պ. պ. Լալայեան և Տարագրոս արել են գիտական արշաւանքներ։ Ս.-Նը էջմիածնայ գաւառում և երկրորդը Վայոց Ձորում, ուր պարոնը հանել է բոլոր վանքերի յատակագծերը, որոնք մտնելու են պ. Լալայեանի «Վայոց Ձոր» հնագիտական ուսումնասիրութեան մէջ։

Այսպիսի բեղմնաւոր և արդիւնաւէտ գործունէութիւնն ունենալով հանդերձ՝ հայոց ազգագրական ընկերութիւնը ապահովուած չէ ու 1912 թուականին բարելաւելու համար իւր նիւթական միջոցները՝ կազմակերպել է արքունական թատրոնում մի ներկայացում, որից զուտ արդիւնք է ստացել 1054 ռուբլի։

Ընկերութեան հովանաւորող անդամներն են՝

Նորին վեհ. Մկրտիչ կաթ. ամենայն հայոց.

,, ,, Մատթէոս Բ. ,,

Նորին վեհափառ. Գէորգ Ե. ,,

Պատուաւոր անդամներ են —

Ակադեմիկ Նիկողայոս Եակովլևիչ Մարր. Ալեքսանդր Մելիք Ազարեան, Կոմսուհի Պրասկովիա Սէրգէևա Ավարովա։

1912 թուին ընկերութիւնը ունեցել է 119 Մշտական անդամներ, որոնցից 18 վճարել են 100-ական, իսկ մնացածները 50-ական ռուբլի. նաև 37 տարեկան բաժանորդ անդամներ, որոնք վճարել են 6-ական ռուբլի։

Այս ընկերութիւնը իր գործունէութեամբ հիացմունք է պատճառել միշտ նրա հաստատութիւնները այցելութեան եկած նշանաւոր ու բարձրաստիճան հիւրերին և արժէ որ ապահովուի, որպէս զի հնարաւորութիւն ունենայ իր գործունէութեան սահմաններն ու չափը ընդլայնելու, ծաղկելու ու բարգաւաճելու, սակայն ինչպէս տեսնում ենք հայի ժլատ ձեռքը կարօտ է թողել նաև այս, երկար տարիներից ի վեր, բեղմնաւոր ու բովանդակալից գործունէութիւն ցոյց տուած ընկերութեանը։

Ե՞րբ և ինչով վերջապէս պէտք է ոգևորուենք մենք։

Ծանօթացնելու համար ընթերցողին նաև հայոց ազգագրական ընկերութեան ելք ու մուտքի հետաւելորդ չենք համարում զետեղել ստորև նրա 1912 թուականի տարէվերջի հաշուեկշիռն ու 1913 թ. նախահաշիւը։

(յաջորդիւ)

Մելիք.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՁԱՑՆ ԳԱՒԱՌԻՑ

—

18 Հոկտ. Մարտա

Վերջին տարիներս, Մարաղայի հայ ազգային ու հասարակական գործերի փքթած, լճացած, դժբաղդ և սնանկացած իրականութեան մէջ՝ յաճախ աչքի են զարկում մի շարք տխուր խնդիրներ, որոնք զանազան դժբաղդ հանգամանքներից կամ անուղղակի պատահարներից յանձնուել են մի շարք տգէտ, գործին ոչ-գիտակից անձանց ձեռքը և եկել հասել են այս օրուան տխուր վիճակին։

Ես պարտականութիւն եմ համարում խօսել երեք հարցերի շուրջը սրտացաւ «Միութիւն» ազատախօս սիւնեակների մէջ, մասնաւորապէս յայտնելով իմ և մի շարք գիտակից հայ երիտասարդութեան ստացած տպաւորութիւնները։

Հարցերից առաջինը դպրոցն է։ Դպրոցը, որը մի սրբավայր է հայ ժողովուրդի կրթութեան և զարգացման համար։

Երկրորդը գալիս է Գրադարան-ընթերցարանը. սա այն վառարանն է, այն հիմնարկութիւնը, որից կոկւում, մշակւում է ընթերցասէրի մտաւորականը և, շնորհիւ ընթերցասիրութեան, յայտնւում է անհատի հոգեկան և մտաւորական աշխարհահայեացքը, ձգտում է կարդալ և ծանօթանալ այլ և տարբեր աշխարհների, ազգերի, հասարակութեանց կեանքի մասին, և զգալ հպարտանալ, որ ինքն էլ մարդ է, և գէտ մի բան։

Մի ազգ, մի ժողովուրդ, երբ չունի դպրոց և գրադարան, նա ազգ չէ, կորած է դժբախտացած, ինչպէս օրինակ մեր Մարաղայի Հայ Հասարակութիւնը։ Սա այն հասարակութիւնն է, որ փախչում, յաճախ խուսափում է ազգային այդ մեծ և երկու սուրբ հաստատութիւններից։ Իսկ ի՞նչ է եկեղեցին, ի՞նչ դեր խաղաց նա հայ ազգութեան համար հարիւրաւոր տարիների ընթացքում և ի՞նչ տարեց հայ ժողովուրդը և որքան համայնք և անհատներ մարտիրոսացան այդ վեհագոյն գաղափարը պահելու, Այդ ամենքիս համար պարզ է և գիտէ ամեն հայ հայոց-պատմութիւնից։ Ի՞նչ դեր է կատարում եկեղեցին հայ ազգի համար և ի՞նչ արժէք ունի այդ վեհ հաստատութիւնը Մարաղայում, դրա համար կիսօսեմ յաջորդիւ. . . բայց դեռ դառնանք այժմ մեր շօշափած երկու հարցերի շուրջը

Ատրպատականի շատ քաղաքներում և նոյն իսկ գաւառամասերում, գուցէ. շատերը գիտեն, որ Մարաղան դպրոց ունի... սակայն իրապէս ես հասկանում կամ ընդունում եմ դպրոց թէ ոչ.—իհարկէ ոչ. այո՛, արտաքին տեսքով շէնք՝ և անուամբ ս. Յակովբեան դպրոց կայ. իսկ նրա տընտեսականը, աշակերտները, ուսուցիչ-ուսուցչուհիները ուր է՞ն, ըստ մի պարոնի «զի քո է կարողութիւն»... ինչո՞ւ, ինչն է պատճառը, որ մինչև այս օր փակ են խեղճ ու կրակ դպրոցի դռները, հայ մանուկը թափառում է փողոցների փոշու և կեղտերի մէջ... երևի նրա ողորմելի ծնողներին այդպէս է հաճելի: Ո՞ւր են գիտակցողներ, ժողովուրդի վարիչներ, մտածողներ... չկան... եթէ բարեբախտաբար լինէին, մեր դպրոցի դռները փակուած և ողորմելի հայ մանուկները փոխանակ դպրոցում գիտութեան, հայ ազգի պատմութեան, կրօնի խօսքերը լսելու և կուլ տալու, այս օր նրանք՝ Մարաղայի ապագայ հայ հասարակութիւնը փողոցի փոշիները չէին կուլ տալ: Ուսման փոխարէն նրանք փողոցներում պարսիկների անբարոյական հայհոյախօսութիւններն են իւրացնում, գոց անում ոտանաւորի փոխարէն... ամօթ Մարաղացուն և նրա պոռոտախօս և երբեմնակի ինքնահաւան ազգ. վարիչներին... (??).

Մարաղայում այժմ կայ երկու կուսակցութիւն, առաջինը որպէս դպրոցասէրներ, որ մի քանի Թաւրիզեցիներ են, այսինքն հարուստներ, որոնք իւրաքանչ. տարի իրենց զաւակները զրկում են Թաւրիզ կրթութիւն տալու. և կան հոգևոր—դպրոցականներ, որոնք ներկայանում են Մարաղացիները, այսինքն «քեասիբ» համարուս ծները:

Մի խօսքով ով փող ունի նա իրաւունք ունի իր զաւակը կրթելու, իսկ ով ոչ՝ նա պիտի անկիրթ մնայ: Թաւրիզեցի վաճառականներն ապրում են Մարաղա, իսկ դպրոց չ'լինելու պատճառով իրենց զաւակների վրայ տասնեակներով ծախք դնում կրթելու ուղարկում Թաւրիզ:

Մթթէ աւելի օգտակար չէր լինի այդ Թաւրիզ գնացած փողերի համախմբումը, որով կապահովուէր փոքր ինչ դպրոցը և կկանչուէին լաւ ուսուցիչ—ուսուցչուհիք և այլն: Թաւրիզցին մասամբ էլ կարող է արդարանալ իր վեր առած քայլում, վասն զի եթէ նա դիմում է Թաւրիզ՝ մասամբ էլ իրաւունք ուն, նա 20 տարի է որ տեսնում է այս տեղի դպրոցը անկանոն և բաղդախնդիր վարիչների անարժան ձեռքում, և միշտ յաջորդող ուսումը. տարին փակ, սնանկ: Հայ Մարաղացու մէջ սարսափելի արմատացել է, և կարծես պապերից ժառանգուած մի կոակ լինի աւանդուած, որ միշտ հոգարձու ընտրելիս քուէն պէտք է տան աղսախկալ, մուխտի կամ ուստա պատուհասներին: Եթէ այսքան տարուայ ընթացքում միշտ լետադէմ, միշտ սնանկ միշտ դժբաղդ կեանք է վարել դպրոցը, դրա պատճառը յաճախ եղել է ուստան, մուխտին և աղսախկալը իր՝ գործին ոչ-գիտակից և ոյժերից վեր լինելու համար: Բաւականէ ուրեմն որքան բարոյական կորուստների մատնեց Մարաղացին իր խեղճ ու կրակ զաւակներին, բաւական է վերջապէս, որ ուստաներ և մուխտիներ իրենց ոյժերից բարձը և վեհ գործերի վարիչ դարձան: Զաւակաց պարտականութիւնը և բարոյական պարտականութիւնը, ընկնում է նոցա ծնողների վրայ: Թող միանան, թող ժողովներ անեն, և ընտրեն իրանց զաւակների կրթութեան համար թարմ, գիտակից և դպրոցի մթնոլորդում 78 տարի սնուած երիտասարդներ և յանձնեն նոր ոյժերին դպրոցի դեկավարութեան գործը և ստանան «գտակար և արդասաւոր պըտուղներ...

Տարիներից ի վեր այս պատմական Մարաղում դոյութիւն ունի գրադ-ընթերցարան: Այս խեղճ հաստատութեան կեանքը սնանկ դպրոցից դեռ մի բան էլ ողորմելի է: Ժամանակի ընթացքում պ. պ. Ա. Տէր-Վարդանեանի և Մ. Բաղդասարեանի դեկավարութեամբ եղել է կանոնաւոր, որը դրադարանի կեանքի համար կարելի է համարել ոսկէ դար, բայց նրանցից յետոյ կրկին անցել է գործի ոչ-գիտակից մի քանի թերուս Մարաղացիների ձեռքը և այս փոքրիկ ու կարճ շրջանում կատարուել է Գրադարանի կեանքում մի տեղատուութիւն—բազմաթիւ գրքեր անցել են գողերի ձեռքը. և կողոպտուած են բազմաթիւ արժէքաւոր գրքեր, իսկ գրադարանը կողպ է մինչև այսօր... վերջին օրերս Թաւրիզցի հայ երիտասարդներից կազմուել է մի վարչութիւն, և ակներև էր այդ ընթերցասէր և եռանդոտ պարոնները շուտով կսկսեն վարել գործը և դիմել այլ տեղերի օժանդակութեան:

«Արուոեան Ֆոնդի» մասին կգրեմ յաջորդիւ:

Հէն-յուս

ԼՈՒՐԵՐ

ԹԷՀՐԱՆ

Թաւրիզում պ. Ալ. Մանասերեանն էլ ծախում է ցորեն:

◆ Լսում ենք, որ աւտոմոբիլային հաղորդակցութեան դադարելուց յետոյ, փոստի երթևեկութիւնը կատարւում է պ. Ջ. Բուդաղեանի կապալի տակ:

◆ Մեզ հաղորդում են, որ օգաթուիչ—աւեատր Կուզմինսկին Թաւրիզից Շարուխանա (Ուրմիոյ ծովափը) թռչելիս՝ ընկել է Թուրքգիդի մի բարձր կատարը: Ինքը անվնաս է. կոտրուել է մեքենայի թևը: Նրան իջեցրել են կատարից և ճամպել Ուրմի.

◆ Յաջորդ համարում կտանք ռադիումի գործած հրաշքներից մէկի մասին տեղեկութիւն:

◆ Սրամեան դպրոցի մանկ. ժողովի կողմից ամսիս 8-ի համար կանչուած էր ծնողական ժող: Ծնողներից եկել էին մի տիկին և 4 պարոն:

◆ Ամսիս 7-ի գիշերը յօգուտ Լիլա. ի դպրոցի տրուել է ներկայացում—պարահանդէս: Բեցէնզիան յաջորդիւ:

◆ Ղալայի Հոգաբարձութեանն տեսչի գըլուխը ցաւեցնող չարաբաստիկ թոշակի մասին յաջորդ անգամ կտպուի մի կարևոր յօդուած: Կան 1000-ների, տների, և մագազինների տէրեր, իսկ այդ «խեղճերից» պահանջւում է 20 կամ 15 թմն. թոշակ և նոքա «հնար չունին տալու»:

◆ Ամսիս 6-ի գիշերուանից քաղաքիս 10 կարևոր փողոցներում դրուեցին փոստարկղեր. այդ կարիքի մասին մենք գրել էինք «Միտք» № 5-ում: Փոստարկղերում ընդունում են քաղաքային նամակներ, 2 շահի մարկայով:

ՊԵՐՍԻԱՍՏԱՆ

Թէհրան.—Պալատում նիստի ժամանակ, պետական խնամակալի ճառից յետոյ, մէջլիսի նախկին պատգամաւոր Մուդարիսը սկսեց խստօրէն քննադատել պետական խնամակալին և կաբինէտը, և կշտամբեց նրան կեղծութեան մէջ. Վերջը դովված պետական խնամակալը անմիջապէս մեկնեց տուն: Զայրացած՝ Մուդարիսի վարմունքից, Սիփէհդարը սկսեց նրան հայհոյանքներ թափել. Մուդարիսը մեղադրեց Սիփէհդարին նրանում, որ Պարսկաստանի հիւսիսը վաճառել է ռուսներին. Սիփէհդարը յարձակվեց վիրաւորողի վրա ձեռնափայտով:

«Մշակ»

ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒՆ

Ռէշտի մեր սեպհական թղթակցից ստացած նամակից տեղեկանում ենք.

«Մի վստահելի տեղեկութեան համաձայն. պրինց Սալար-էդ Դովլէն այժմ Սարդարաբադումն է գտնւում, չնայած մօտ անցեալում յայտարարուեց, որ նա հեռացաւ Պարսկաստանի սահմաններից և Ռուսաստանի վրայով անցաւ Եւրոպա, Շուէյցարիայում հաստատուելու համար»:

Խմբագիր-Հրատարակիչ՝
Ա. Տէր-Վարդանեան
Տիրէն՝ Միհրան Բարդուսարեան

ՊՕՍՏԱՐԿՂ

Մեր գործակալներին.—Ուղարկուած է բոլորիդ համապատասխան քաղաքների բաժանորդների ցուցակը, խնդրում ենք փութով դանձել ամբողջ տարուայ բաժնեդները և շուտով մեզ ղրկել: Թո՛ղ մեր պ. պ. բաժանորդներն իմանան, որ մենք առանց շահուելու, ձրի և մի բան էլ ղեռ մեր սուղ միջոցներից թերթի հրատարակութեան վրայ դնելով և աշխատելով, էլի չենք կարողանում ծածկել ծախսերը, որովհետև թղթավաճառ, դրաշար, ապարան, ցըրիչ, փոստ ամեն շաբաթ իրենց հերթին ստիպողաբար իրենց դրբան են պահանջում և ստանում, մենք նեղում ենք՝ ժամանակին չտանալով մեր բաժանորդներից մեր դրամները:

Թաւրիզ-Նոգարին.—Մեր զրչակների շաղփաղփման մասին ձեր գրածը կապուի յաջորդիւ:

Թաւրիզ.—Մեր Պանկրատներին կամ «Լաբադաղը» հրատարակողներին—ցժամադրութիւն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵԳԵԶԻՆԻ ՅՈՒՅՑԵՆԵԼ

„ԶԻՆԳԵՐ"
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ,



ՓԻՐՄԱՅԻ ԴՐՕՇԱԿ

„ԶԻՆԳԵՐ" ընկերութեան խանութներում ստացուել են ամեն տեսակ կարեմեքենաներ: Ստացուել է 1913 թուի կատարելագործուած մի մեքենայ 6-րդ կլաս կոչմամբ յայտնի, որը իւր մեխանիկմով ամենայայտնի գործածելի մեքենան է: Ծախւում են ինչպէս կանխիկ, նոյնպէս և ամսավճարով, շաբաթական ՀԻՆԳ դրան վճարումով ի դիւրութիւն գնողների:

„ԶԻՆԳԵՐԻ" խանութում ծախւում են ընկերութեան յատուկ կոճի թելերը. ամեն մի կոճը բաղկացած է 250 արշին թելից, հատը 6 շահի, տուփով՝ 2 դրան 75 կոպէկ:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

1914

ՏԱՐՈՒՈՅՆ

Առաջիկայ 1914-էն սկսեալ «Հանդէս Ամսօրեայ»ի քննութեան առարկայ պիտի ըլլան մասնաւորապէս հայ ազգագրութիւնն, ժողովրդագիտութիւնն, ճարտարապետութիւնն, պատմութիւնն, գեղարուեստն և—դիցաբանութիւնն համեմատական կրօնախօսութեան (vergleichende Religionswissenschaft) ամենանորագոյն մեթոդով.

Տարեկան բաժնեգինն է կանխիկ վճարմամբ՝

Տաճկաստանի համար.	15 ֆր. 72 զ.
Ռուսաստանի ,, ...	6 ռուբլի
Ամերիկայի ,, ...	3 դոլար.

Մեր հասցէն է՝

Rédaction de la revue „Handes Amsorya"

VIENNE (Autriche), VII/2 Mechitharistengasse 4.